ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/117

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.08.2018թ. թիվ 02/26-3/14426-18 գրությամբ «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 08.08.2018թ. թիվ 04/31.2/10512-18 գրության հիման վրա, 09.08.2018թ. «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 08.08.2018թ. թիվ 04/31.2/10512-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2018 թվականի հուլիսի 25-ին գնանշման հարցման ընթացակարգով ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/11 ծածկագրով կազմակերպված ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրման ծառայությունների գնման գործընթացին հայտ է ներկայացրել «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ն և ճանաչվել որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ Կարգ) 43-րդ կետը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 25.07.2018թ. ներկայացվել է համապատասխան հարցում, ինչպես նաև ծանուցվել է մասնակցին ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի կողմից փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում ներկայացրած գնային առաջարկից, ինչպես նաև որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ: Համաձայն Կարգի 47-րդ կետի հանձնաժողովը դիմել է մասնակցին շտկելու արձանագրված անհամապատասխանությունները, սակայն դրանք մասնակցի կողմից շտկվել են մասամբ:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ Արմեն Ավետիսյանը

3. <u>«Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 09.08.2018թ. գրությամբ դիմել է «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից

09.08.2018թ. թիվ 02/26-3/14426-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ին տնօրեն Վահրամ Ղարախանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/117 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 09.08.2018թ. թիվ 02/26-3/14426-18 գրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 08.08.2018թ. թիվ 04/31.2/10512-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 25.07.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, 02.08.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը և 06.08.2018 ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունները, Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 20.08.2018թ. թիվ 01/1-181 և 01/1-182 գրությունները, Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղի և «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի միջև 06.10.2017թ. կնքված թիվ ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-17/75 և 05.02.2018թ. կնքված թիվ ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-18/36 պայմանագրերը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար՝ ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N3 հավելվածով՝ որոկավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/11

ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 25.07.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 6.1 կետով որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովը 02.08.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2.1 կետով արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ներկայացված տեղեկատվության համաձայն «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ներկայացրած գնային առաջարկից:

Նույն արձանագրության 2.2 կետով Հանձնհաժողովը արձանագրել է, որ «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը՝ ներառյալ դիմում հավելված 5-ը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ.

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ և «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի միջև 06.06.2017թ. կնքված թիվ ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-17/75 պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում հստակ նշված չէ գնման առարկան, որը հնարավորություն չի տալիս այն գնահատելու, որպես նմանատիպ.

- Պայմանագրին կից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի պատճեններում բացակայում են պայմանագրի համարը և կնքման ամսաթիվը, որը հնարավորություն չի տալիս այն գնահատելու, որպես նմանատիպ.

- Պայմանագրին կից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունների հանրագումարը՝ 224.750 ՀՀ դրամ չի համապատասխանում պայմանագրով սահմանված

ծառայության մատուցման ընդհանուր գումարին 300.000 ՀՀ դրամ, որը հնարավորություն չի տալիս այն գնահատելու, որպես պատշաճ կատարված.

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ և «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի միջև 05.02.2018թ. կնքված թիվ ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-18/36 պայմանագրով ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել 28.12.2018թ.: Կից ներկայացված 12.02.2018թ., 09.04.2018թ. և 12.06.2018թ. հանձնման-ընդունման արձանագրություններ հանրագումարը՝ 480.000 ՀՀ դրամը չի համապատասխանում պայմանագրով սահմանված ծառայության մատուցման ընդհանուր գումարին 500.000 ՀՀ դրամ, որը հնարավորություն չի տալիս այն գնահատելու, որպես պատշաճ կատարված:

- Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա հիմնադրամի և «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի միջև 27.11.2017թ. կնքված թիվ ՀԳՊԱ-ԳՀԱԾՁԲ-17/04-1 պայմանագրի և վերը նշված երկու պայմանագրերի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, ինչը հնարավորություն չի տալիս նախկինում կատարված պայմանագրերը գնահատելու, որպես նմանատիպ:

Նույն արձանագրության 2.3 կետով Հանձնհաձողովը որոշել է առաջարկել «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 06.08.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասամբ, մասնավորապես.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ներկայացված տեղեկատվության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունը շտկված չէ՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ներկայացրած գնային առաջարկից:

- Մասնագիտական փորձառությունը հիմնավորելու համար ներկայացված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ և «Տիր հրատարակչություն»

ՍՊԸ-ի միջև 06.06.2017թ. կնքված թիվ ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-17/75 պայմանագրին կից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրություններում արձանագրված անհամապատասխանությունը շտկված չէ՝ պայմանագրով սահմանված ծառայության մատուցման ընդհանուր գումարը՝ 300.000 ՀՀ դրամ է, հանձնման-ընդունման արձանագրությունների հանրագումարը՝ 224.750 ՀՀ դրամ:

- Մասնագիտական փորձառությունը հիմնավորելու համար ներկայացված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ և «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի միջև 05.02.2018թ. կնքված թիվ ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-18/36 պայմանագրին կից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրություններում արձանագրված անհամապատասխանությունը շտկված չէ՝ պայմանագրով սահմանված ծառայության մատուցման ընդհանուր գումարը՝ 500.000 ՀՀ դրամ է, հանձնման-ընդունման արձանագրությունների հանրագումարը՝ 480.000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 2.1 կետով Հանձնաժողովը որոշել է մերժել «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի հայտը:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղի միջև 06.10.2017թ. և 05.02.2018թ. կնքվել են տպագրական ծառայությունների մատուցման պայմանագրեր, մի պայմանագրով ծառայության մատուցման ընդհանուր գումարը սահմանված է եղել՝ 500.000 ՀՀ դրամ, մյուս պայմանագրով՝ 300.000 ՀՀ դրամ, պայմանագրերին կից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունների հանրագումարները պակաս են եղել ծառայության մատուցման ընդհանուր գումարներից, քանի որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղի հետ ունեցել են պայմանավորվածություն նշված ծառայությունները մատուցել անհրաժեշտ քանակությամբ: Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց նաև, որ գրությամբ դիմել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղին, որպեսզի վերջինս տրամադրի տեղեկատվություն առ այն, թե որքան է փաստացի անհրաժեշտ եղել մատուցել նշված պայմանագրերով նախատեսված տպագրական ծառայությունները:

Ընկերության գրությանն ի պատասխան «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղը 20.08.2018թ. թիվ 01/1-181 գրությամբ հայտնել է հետյալը.

«Ի պատասխան Ձեր 16.08.2018թ. գրության՝ հայտնում եմ, որ Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ և «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի միջև 06.10.2017թ. կնքված թիվ ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-17/75 պայմանագրով նախատեսված էր ԵՊՀ Իջևանի մասնաճյուղին մատուցել 300.000 ՀՀ դրամի տպագրական ծառայություններ, սակայն փաստացի մասնաճյուղին անհրաժեշտ է եղել և կատարվել են 224.750 ՀՀ դրամի ծառայություններ:»:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղը 20.08.2018թ. թիվ 01/1-182 գրությամբ հայտնել է հետյալը.

«Ի պատասխան Ձեր 16.08.2018թ. գրության՝ հայտնում եմ, որ Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ և «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի միջև 06.10.2017թ. կնքված թիվ ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-18/36 պայմանագրով նախատեսված էր ԵՊՀ Իջևանի մասնաճյուղին մատուցել 500.000 ՀՀ դրամի տպագրական ծառայություններ, սակայն փաստացի մասնաճյուղին անհրաժեշտ է եղել և կատարվել են 480.000 ՀՀ դրամի ծառայություններ:»:

Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց նաև այն, որ իրենց կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն՝ մասնավորապես՝ ներկայացված գնային առաջարկի 4-րդ սյունակում ԱԱՀ-ի բաղադրիչը լրացված չէ թվերով և տառերով, ուստի գտնում է, որ ներկայացված հայտը նշված հիմքով ենթակա էր մերժման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

• 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 61-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա նույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պահանջները չեն սահմանվում հրավերով, և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

- 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է

հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է նույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա նույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/11 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի՝

- 2.5 կետի 1-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակցին ներկայացվող՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա) մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

բ) նույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-

ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

- 2.5 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակցին ներկայացվող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ) սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

գ) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն:

- 4-րդ հավելվածով նախատեսված գնային առաջարկի 4-րդ սյունակում առաջարկվող գնի ԱԱՀ-ի բաղադրիչը մասնակցի կողմից լրացվում է տառերով և թվերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, կիրառվում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թ. մայիսի 24-ի N 238-Ա հրամանով հաստատված՝ գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի 4-րդ հավելվածով նախատեսված գնային առաջարկի 5-րդ սյունակում առաջարկվող գնի ԱԱՀ-ի բաղադրիչը մասնակցի կողմից լրացվում է թվերով և տառերով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Ընկերության կողմից հայտ է ներկայացվել մեկ չափաբաժնի համար, որի ընդհանուր գինը կազմել է 1.602.00 ՀՀ դրամ գումար, որը չի գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը:

- «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ն Հրավերի թիվ 3 հավելվածով՝ որոկավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

- ՀՀ ՊԵԿ կողմից 30.07.2018թ. ներկայացված եզրակացության համաձայն՝ «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամուտը կազմել է 0 (զրո) ՀՀ դրամ:

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ և «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի միջև 06.06.2017թ. կնքված թիվ ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-17/75 պայմանագրով սահմանված է եղել ծառայության մատուցման ընդհանուր գումարը՝ 300.000 ՀՀ դրամ:

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ և «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի միջև 05.02.2018թ. կնքված թիվ ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-18/36 պայմանագրով սահմանված է եղել ծառայության մատուցման ընդհանուր գումարը՝ 500.000 ՀՀ դրամ:

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ և «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի միջև 06.06.2017թ. կնքված թիվ ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-17/75 պայմանագրին կից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունների հանրագումարը՝ 224.750 ՀՀ դրամ:

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ և «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի միջև 05.02.2018թ. կնքված թիվ ԵՊՀ ԻՄ ԲԸԱՀԾՁԲ-18/36 պայմանագրին կից ներկայացված հանձնման-ընդունման հանձնման-ընդունման արձանագրություններ հանրագումարը՝ 480.000 ՀՀ դրամ:

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղի 20.08.2018թ. թիվ 01/1-181 և 01/1-182 գրությունների համաձայն՝ նշված պայմանագրերով նախատեսված ծառայության մատուցման ընդհանուր՝ 500.000 ՀՀ դրամ և 300.000 ՀՀ դրամ, գումարներից փաստացի անհրաժեշտ է եղել մատուցել համապատասխանաբար՝ 480.000 ՀՀ դրամ և 224.000 ՀՀ դրամ գումարի չափով ծառայություններ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն: Ներկայացված հայտի գնային առաջարկի 4-րդ սյունակում ԱԱՀ-ի բաղադրիչը լրացված չէ թվերով և տառերով:

Հաշվի առնելով, որ Կարգի 61-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը (...), ապա մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին, և այն, որ Կարգի 63-րդ կետի 2-րդ ենթակետի հպմաձայն՝ եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը (...), ապա մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, և նկատի ունենալով, որ Ընկերության կողմից ներկայացված նախահաշվային գինը չի գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունն ըստ էության ապահովել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, որպես ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, 63-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջի կատարումը, այն է՝ հայտով ներկայացրած հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թ. մայիսի

24-ի N 237-Ա հրամանով հաստատված՝ գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի 4-րդ հավելվածով նախատեսված պահանջներին, հետևաբար, այն պետք է մերժվեր Հանձնաժողովի կողմից, ինչի արդյունքում ի հայտ չէին գա այն հանգամանքները, որոնք հիմք են ծառայել Ընկերության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.08.2018թ. թիվ 02/26-3/14426-18 գրությամբ «Տիր հրատարակչություն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ